ՊՐՈՖ. Ա. ՏԵՐՏԵՐՅԱՆԻ ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

Մայիսի 13—14-ին տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտի, Վ. Մ. Մոլոտովի անվան Երևանի Պետական Համալսարանի գիտական խորհուրդների և Հայաստանի Սովետական Գրողների Միության քննադատական սեկցիայի համատեղ նիստը, որը քննության առավ պրոֆ. Ա. Տերտերյանի վերջին տարիների ստեղծագործությունները։

Այդ մասին զեկուցեց ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Է. Թոփչյանը։ Նա իր զեկուցման սկզբում կանգ առավ այն նշանակալից աշխատանքի վրա, որ կատարել է պրոֆ. Ա. Տերտերյանը ավելի քան քառասուն տարիների իր մանկավարժական և գիտական գործունեության ընթացքում։

Զեկուցողը այնուհետև հանգամանորեն խոսեց պրոֆ. Ա. Տերտերյանի վերջին տարիների ստեղծագործություններում նկատվող մի շարք էական, գաղափարական սխալների մասին։

Պրոֆ. Ա. Տերտերյանը հաճախ անտեսում է այն ճշմարտությունը, որ անցյալի գրողների հայացքները ձևավորվել են դասակարգային պայքարի կոնկրետ պայմաններում։ Նա գրողներին չի բնութագրում իրենց հակասությունների, գաղափարական էվոլյուցիայի մեջ, նրանց ներկայացնում է համատարած դեմոկրատներ։

Պրոֆ. Ա. Տերտերյանի մի շարք աշխատություններում նկատելի է անսկզբունքայնությունը և էկլեկտիզմը, գրականագիտական որոշակի մի սկզբունքի հետևողական կիրառման բացակայություն։

Նախասովետական շրջանում պրոֆ. Տերտերյանը գրել է մի շարք աշխատություններ, ինչպես «Հ. Թումանյան—Հայրենի եզերքի քնարերգուն», «Մ. Նալբանդյան— ազգության հրապարակախոսը», «Շիրվանզադե— Հայ ընտանիքի և ինտելիգենտի վիպասանը», «Վ. Տերյան— ձնորքի, ծարավի և հաշտության երգիչը» և այլն։

Այս բոլոր վերնագրերն անգամ ցույց են տալիս թե պրոֆ. Տերտերյանը ինչպիսի մեխանիկական մոտեցում է ունեցել տվյալ հեղինակի ստեղծագործության գաղափարական բովանդակության մեկնաբանության։

Այդ տարիներին կանգնած լինելով իդեալիստական դիրքերի վրա, նա պաշտպանել է արվեստը արվեստի համար տեսությունը։ Այս շրջանում պրոֆ. Տերտերյանի ուսուցիչները եղել են գերազանցապես Օվսյանիկո-Կուլիկովսկին, Գեորգ Բրանդեսը և նույնիսկ իր ռեակցիոն գաղափարախոսությամբ հայտնի Ֆերդինանդ Բրյունետյերը։

Պրոֆ. Տերտերյանը Սովետական իշխանության հաստատումից հետո առաջին երկու տասնամյակներում որոշակիորեն տուրք է տվել պերեվերզևականությանը։ Այդ նկատելի է նրա մի շարք աշխատություններում, ինչպես «Գրական ոճի սոցիոլոգիան» հոդվածում և մասնավորապես «Հայ գրականության պատմության» մասին գրած իր առաջադրություններում։

Վուլգար սոցիոլոգիզմի ջախջախումից հետո դժբախտաբար պրոֆ. Տերտերյանը ընկավ մյուս ծայրահեղության մեջ՝ մարքս-լենինյան գրականագիտության ոգուն խորթ ուղղության գիրկը, ձգտելով անցյալի ամբողջ ժառանգությունը ներկայացնել պրոգրեսիվ, դեմոկրատական և ժողովրդային։

Պրոֆ. Տերտերյանի այս սխալները արդյունք են այն բանի, որ նա չի հասկացել, կամ մոռացության է մատնել լենինյան ուսմունքը գրականության պարտիականության մասին, ամեն մի ազգային կուլտուրայի մեջ երկու կուլտուրայի առկայության և դասակարգային պայքարի մասին։ Այստեղից էլ բխում է գրականության դասակարգային բովանդակության անտեսումը, գրական երևույթների կոնկրետ պատմական մարքս-լենինյան մեկնաբանության փոխարինումը լիբերալ դատողություններով, հայրենասիրության մասին ընդհանրապես ասված խոսքերով։

Պրոֆ. Տերտերյանի մի այլ խումբ սխալները բխում են մարքսիզմի նշանավոր այն դրույթի անտեսումից, որ նույն իդեան պատմական տարբեր կոնկրետ պայմաններում կարող է լինել առաջադիմական և հետո դառնալ ռեակցիոն։ Տերտերյանի աշխատություններում նկատվում է գաղափարների վեր պատ-

մակած լինելու իդեալիստական կոնցեպցիան։ Այսպես, օրինակ, «Ալիշանը և հայրենասիրությունը» հոդվածում պրոֆ. Տերտերյանը գրում է. «Այդ թոհուբոհի մեջ գրելով իր հայրենասիրական երգերը, Ալիշանը կարողացել է դրանք տոգորել ժամանակի ոգով և բարձրանալ իր էպոխայի լավագույն մարդկանց գիտակից։ Հենց դա է, որ նրան կապում է մեր 60-ականների հետ և նրա անունը դնում Նալբանդյանի, Ավաճյանի, Շահազիզի և մյուսների կողքին։ Հայ պատմական անցյալին ես Ալիշանը նայում է 60-ական թվականների բարձրակետից, ինչպես և բոլոր մեծ 60-ականները, նա վերցնում է հայ պատմության բոցը և մոխիրը թողնում անցյալին»։

Որ գաղափարախոսության հիմնական գծերով պահպանողական Ալիշանի ստեղծագործության այս բռնազբոսիկ մեկնաբանությունը և Նալբանդյանի ու Ավաճյանի հետ նրան համեմատելը գալիս է Տերտերյանի վերև նշված սխալ գրականագիտական ելակետներից, բոլոր հեղինակներին, այդ թվում և ընդհուպ իրենց ռեակցիոն գաղափարներով հայտնի հեղինակներին անպայման դեմոկրատ ներկայացնելու տենդենցից։

Պրոֆ. Տերտերյանը նույնպիսի ըմահաճ, ոչ ճիշտ անալոգիայով Նալբանդյանի կողքին դնում է Ղազարոս Աղայանին, գրելով. «Սա կույր հետևողություն չէ, այլ տաղանդների հարազատություն կամ ազգակցություն»։ Այստեղ նորից բացակայում է պատմական մոտեցումը։

Նույնպիսի սխալ դիրքերից է Տերտերյանը գնահատել Րաֆֆուն։ Հեռու կանգնած լինելով իսկական գիտությունից, նա մարքսիզմ-լենինիզմի խոշորագույն հայտնագործությունը՝ մի ազգության կուլտուրայի մեջ երկու կուլտուրա տեսնելու մասին, վերագրել է Րաֆֆուն՝ անտեսելով Րաֆֆու նացիոնալիստական հայացքները։ Տերտերյանը Րաֆֆու մասին գրել է. «Բայց վերջիվերջո Րաֆֆին իբրև խոշոր գրող եկավ այն եզրակացության, որ ամեն մի ժամանակակից ազգի մեջ երկու ազգ գոյություն ունի։ Եթե ատում ենք շահագործողների ազգը, Լենինի խոսքով ասենք, պուրիշկևիչների ազգը, բայց սիրում ենք և պաշտում ենք Չերնիշևսկիների ազգը»։

Ժամանակից և տարածությունից կտրված համեմատությունների սկզբունքը Տերտերյանի սիրած մեթոդն է։ Քմահաճ, անտեղի, երբեմն նույնիսկ անիմաստ կերպով նա սիրում է անել համեմատություններ, իրար կողք դնել այնպիսի գրողների այնպիսի երկերը, որոնք իրենց գաղափարական իդեական բովանդակությամբ երբեմն միանգամայն անհամատեղելի են միմյանց։ Այսպես, նա գրում է. «Թումանյանը պաշտպանում էր այն գաղափարը, որ տարիներ առաջ արտահայտել էր Մ. Գորկին»։ Կամ՝ «Գորկու հետ միասին մեծ էր Թումանյանի սերը սա՛ Պուշկինի և Լերմոնտովի նկատմամբ»։ Կամ՝ «Ռուս ժողովրդի մեծարանքը Թումանյանի մոտ ոչ թե մի պատահեկական զգացմունքի արդյունք էր, այլ խորը համոզմունքի, գիտակցական, խոհուն կշռադատման արդյունք էր։ Ինչպես հայտնի է, Մարքսը ևս ռուսասեր էր։ Նրա ռուսասիրությունը ևս բազմաթիվ հիմնավոր պատճառներ ուներ»։

Ի՞նչ կապ կա այս համեմատությունների մեջ, ի՞նչ միտք ունի նույնացնել, համաձայնության նշան դնել Մարքսի և Թումանյանի ռուսասիրության միջև։

Թեև Տերտերյանը հաճախ է խոսում ռուս ժողովրդի և ռուս գրականության մասին, սակայն նրա աշխատությունների հիմնական թերությունն այն է, որ նա չի կարողացել ճշտորեն մեկնաբանել ռուս ժողովրդի և ռուս գրականության բացառիկ մեծ նշանակությունը հայ գրականության զարգացման համար։

Պրոֆ. Տերտերյանի աշխատություններում որոշակիորեն արտահայտվել է ֆորմալիզմը, հեղինակների և առանձին երկերի վերլուծման ժամանակ, ինչպես և գրականության կարևոր պրոբլեմների՝ ռեալիզմի և ժողովրդայնության հարցերը մեկնաբանելուց։ Տերտերյանը մոռացության է մատնում գրականության իդեական բովանդակության խնդիրը և նշում է միայն ձևային հատկանիշները։

Նույն ֆորմալիստական դիրքն ունի Տերտերյանը պատկերի նկատմամբ։ Նրա համար գեղարվեստական պատկերը ոչ թե իրականությունը ճանաչելու և վերափոխելու միջոց է, այլ միայն տպավորություն ստեղծելու միջոց։

Պրոֆ. Տերտերյանի թերություններից մեկն է նրա անտեղի հաճոյակատարությունները կեղծ հեղինակությունների առջև, հատկապես եվրոպական հեղինակների։ Գրեթե անընդհատ, երբեմն միանգամայն անտեղի կերպով, չգիտենք ինչու շարունակ վկայակոչվում են Ժորժ Բրանդեսը, Իպոլիտ Թենը և ուրիշները։

Տերտերյանի հետազոտության մեթոդը տանում է գրականության և կյանքի անջատմանը, գրական երևույթը կենդանի իրականությունից կտրելուն, նրա մոտ գրականագիտությունը վերածվում է զուտ գրական ֆորմալ անալոգիաների, սխոլաստիկական մարզանքների։

Իր զեկուցման վերջում Թոփչյանը նշեց, որ գրականագիտական այն մեթոդը, որով առաջնորդվում է պրոֆ. Տերտերյանը, միանգամայն անընդունելի է։ Այդ մեթոդի խիստ, ա-

նողոք բնագատություն կոժանդակի ամենից առաջ պրոֆ. Տերտերյանին՝ ուզղելու սխալները, կանգնելու մարքս-լենինյան գրականագիտության ճիշտ ճանապարհի վրա։

Է. Թովլլյանի զեկուցումից հետո բացված մարքի փոխանակությանը մասնակցեցին Ք. Քոչարը, Ռ. Հովհաննիսյանը, Ս. Բագյանը, Ա. Կարինյանը, Հով. Մելիքյանը, Գ. Ստեփանյանը, Վ. Գարտիգունին, Աս. Ասատրյանը, Ռ. Մոմջյանը, Հ. Չանալանյանը։

Ելույթ ունեցողները՝ խոսելով պրոֆ. Ա. Տերտերյանի արժանիքների, մանկավարժական և գրականագիտական բեղուն գործունեության մասին, նշեցին, որ Տերտերյանի վերջին տարիների աշխատություններում տեղ գտած սխալները պատահական վրիպումներ, սայթաքումներ չեն, ինչպես կարծում են ոմանք, այլ սրդյունք են որոշակի սխալ կոնցեպցիայի, անընդունելի մեթոդոլոգիայի։

Պրոֆ. Տերտերյանը անցել է ստեղծագործական տատանումներով լի մի ճանապարհ։ 1930-ական թվականներին նա գտնվել է Պոկրովսկու վուզպար սոցիոլոգիական շկոլայի ազդեցության տակ։ Վերջին տասնամյակում փորձելով ազատագրվել այդ ազդեցությունից, փոխանակ ավելի ընդհուպ դալու դեպի մարքսիստական գրականագիտություն, թերվել է դեպի ֆորմալիստական գրականագիտություն, որդնգրելով հատկապես պատմա-համեմատական մեթոդը։

Ցնայած պրոֆ. Տերտերյանը իր վերջին շրջանի աշխատություններում հաճախ է խոսում մի ազգության մեջ երկու ազգություն տեսնելու լենինյան հայտնի դրույթի մասին, սակայն նրա մոտ գրականագիտական այդ սկզբունքը հիմնականում անտեսված է։ Նա փաստորեն հանդես է գալիս հայ գրականության միասնական հոսանքի լիբերալ թեզով։

Եթե որևէ մեկը փորձի համեմատել պրոֆ. Տերտերյանի վերջին տարիների աշխատությունները, ընդամենը 15 տարի առաջ նրա գրած աշխատությունների հետ, ապա նա կնկատի, թե ինչպիսի ուժեղ հակասություններ, երբեմն միանգամայն հակառակ բնութագրումներ կան նրա մոտ այս կամ այն գրողի աշխարհայացքի մասին։ Օրինակ՝ 15 տարի առաջ պրոֆ. Տերտերյանը Դերենցին համարել է ֆեոդալիզմի գաղափարախոս, ծայր աստիճան ռեակցիոն մի գրող։ Տերտերյանի նոր աշխատություններում առաջ է բաշվում այն թեզը, թե Դերենցը հայրենասիրության խնդրում կանգնած է Նալբանդյանի կողքին, Դերենցն արդեն որոշ հարցերում համեմատվում է նույնիսկ Մաքսիմ Գորկու հետ։

Գրեթե նույնի պիտի ասել նաև Ալիշանի և ուրիշ գրողների բնութագրման մասին։

Պրոֆ. Տերտերյանի մոտ հայրենասիրությունը, ինտերնացիոնալիզմը վերացական երևույթներ են, են կոնկրետացվում, նրա մոտ նույն որակն ունեն թե՛ Ալիշանի, թե՛ Նալբանդյանի, թե՛ Դերենցի և թե՛ Հակոբյանի հայրենասիրությունները։ Ավելին՝ ինչքան էլ տարօրինակ թվա, Տերտերյանը հայ ռեալիստական գրականության հիմնադիր Հակոբ Հակոբյանի ինտերնացիոնալիզմի նկատմամբ ավելի վերապահ է, քան Ալիշանի։

Պրոֆ. Տերտերյանի գրականագիտական ստեղծագործությունների հիմքում ընկած է պատմահամեմատական մեթոդը, որն իր մեխանիկական բռնագրոսիկ անալոգիաներով ոչ միայն չի կարողանում բացահայտել տվյալ հեղինակի ստեղծագործությունների գաղափարական բովանդակությունը, վեր հանել նրա գեղարվեստական արժանիքները, այլ երբեմն մթագնում ու սխալ կերպով է ներկայացնում։

Պրոֆ. Տերտերյանի մեխանիկական այդ մեթոդի հետևանքով գրողները չեն երևում իրենց պատմական ժամանակաշրջանի մեջ։ Նրա մոտ բացակայում է ժամանակաշրջանի հակասությունների, քաղաքական իրագարձությունների, տնտեսական զարգացման անալիզը։ Դրա համար էլ գրողները ներկայացվում են որպես մեկուսի աշխարհայացքի տեր մարդիկ։ Այդ է կկայում, օրինակ՝ պրոֆ. Տերտերյանի՝ մարքսիզմի կլասիկների մի շարք ասույթները մեր գրողների մոտ տեսնելու տենդենցը։ Այսպես՝ ըստ Տերտերյանի՝ Արովյանը իմացել է մի ազգի մեջ երկու ազգ տեսնելու սկզբունքը։ Լենինյան այդ հանճարեղ դրույթի մեխանիկական վերագրումը Արովյանին, անընդունելի է, սխալ և աղավաղում է տենց Արովյանի աշխարհայացքը։

Պրոֆ. Տերտերյանը 200 էջ գրել է Հ. Պարոնյանի մասին։ Սակայն այդ ստվար աշխատության մեջ չի երևում Պարոնյանը իր ստեղծագործական ամբողջության մեջ։ Բացակայում է պատմական ժամանակաշրջանի անալիզը, հասարակական-քաղաքական այն հարաբերությունները, որոնց արտահայտություններն են եղել Պարոնյանի ստեղծագործությունները։

Նիստի աշխատանքներն ամփոփեց գրականության ինստիտուտի դիրեկտոր պրոֆ. Մ. Մկրյանը։